ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՏԱՆԻՆԵՐԸ

Պերսանքի պեղածո առարկաների խմբում իրենց ուրույն տեղն ունեն մատանիները, որոնք իրև հարդարանքի բաղկացուցիչ տարր հայտնի են հնագույն ժամանակներից։ Ինչպես բոլոր զարդերը, այնպես էլ մատանիները մի առանձին շուք են հաղորդել տարազին, կազմելով նրա անբաժան մասը։ Մատանիները կրել են ոչ միայն կանայք, այլև տղամարդիկ։ Հայկական լեռնաշխարհում առաջին մատանիները հայտնի են ուշ բրոնզի դարաշրջանից[1]։ Վաղ երկաթի դարաշրջանում դրանց թիվը ավելանում է, իսկ ուշ անտիկ դարաշրջանում՝ ստանում ամենալայն տարածումը։ Արևելյան ժողովուրդների մոտ մատանու վերաբերյալ պահպանվել է մի հետաքրքիր ավանդություն. «Մատանին ամենալավ զարդն է մատի վրա։ Հարմար է և դեղեցիկ։ Արքայազնի մատն առանց մատանու նույնն է, ինչ որ առանց անվան։ Մատանին նրա մատին նույնն է, ինչ որ դոտին մեջքին։ Իսկ վերջինս իր մեջ թաքցրած ունի մի մեծ խորհուրդ՝ բարձր իշխանություն։ Այն միաժամանակ համարվել է հոլովական հուսուիթ։ Բոլոր զարդերը, որ ունեն մարդիկ, երբեմն պետք է կրել, երբեմն՝ ոչ, միայն մատանին է, որ պետք է կրել միշտ»[2]։ Մատանին եղել է պերճանքի առարկաներից ամենահարդին և տարածվածը։ Այդ են վկայում նրա ձևերի բազմազանությունն ու գործածության լայն ոլորտը։ Թագավորներն ու իշխանները, ի նշան պետական բարձր իշխանության, կրում էին հատուկ մատանիներ. «Եւ հանեաւ զնոսա անտի՝ տայ զմատանի ի ձեռս Աշոտոյ և տիրեցուցանէ սեփական ժառանգութեանն հանդերձ իշխանական ճոխութեամբ»[3]։ Թագավորական մատանիներով էին կնքվում թագավորական հրամաններն ու հրովարտակները, համապետական նշանակություն ունեցող վավերաթղթերը, տարբեր երկրների հետ կնքած բարեկամական, ռազմական հաշտության դաշնագրերը, համաձայնագրերը։

Թագավորներից հետո իրենց բարձրագույն իշխանությունը վկայող կնիք-մատանիներ ունեին խոշոր իշխաններն ու ֆեոդալները. «Եւ արարեալ նամակ իշխանին Սիւնեաց Վասակայ իւրով մատանեաւ՝ հրամայէր նամակաւն առնել և այլ ամենայն աւագ տանուտէրացն Հայոց և կնքեալ զնամականին իւրաքանչիւր ուրուք մատանեաւ տայր բերել և զկնքեալ Աւետարանն ուխտին»[4]։ Այդ մատանիներով նրանք մասնակցում էին թագավորական որոշումների ու հրամանների, պայմանագրերի ու դաշնագրերի վավերացմանը և վերջապես դրանցով էին նրանք հաստատում իրենց սեփական տիրույթներում արձակած կարգադրությունները, կատարած նվիրատվությունները. «Եւ իւրաքանչիւր մատանի կապարեայ կնքով նգեալ ի վերայ»[5]։

Մատանին խորհրդանշում էր և հոգևոր բարձր իշխանություն։ Համաձայն հայ եկեղեցական կանոնագրքի, մատանին հոգևոր դասի համար ուներ աստիճանի և պատվո նշանակություն։ Մատանի կրելու իրավունք ուներ միայն բարձր հոգևորականությունը՝ կաթողիկոսներն ու եպիսկոպոսները։ «Եւ ես Բարգէն Հայոց կաթողիկոս և ամենայն եպիսկոպոսունք, և Վարդ Մամիկոնեան, և այլոք միանգամ իշխանք, և նախարարք էաք, գրեցաք հայերէն և պարսկերէն և կնքեցաք մերով մատանեաւ»[6]։ «Եւ գրեցին կտակ յաւիտենական և կնքեցին իւրեանց մատանեաւ որ ունէր օրինակ զայս. «Ես Տէր Դաւիթ՝ շնորհօքն Աստուծոյ Սիւնեաց եպիսկոպոս»[7]։ Կաթողիկոսները, եկեղեցական կարգի

---

1 Ն. Լալայան, Դամբարանների պեղումները խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 32—33, 197, նկ. 151։

2 Л. Я. Борисов, В. Г. Луконин, Сасанидские геммы, Л., 1963, էջ 9—10։

3 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 445։

4 «Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 121։

5 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 309։

6 «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 47։

7 Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 205։

համաձայն, մատանին կրում էին աջ մատնեմատին, իսկ եպիսկոպոսները՝ ձկույթին[8]։

Կնրամատանիները լինում էին թանկարժեք մետաղներից. երբեմն՝ թանկարժեք քարերով, հաճախ էլ առանց քարերի։ Դրանք իրենց վրա կրում էին փորագիր զանազան պատկերներ, զինանշաններ, հոգևոր և աշխարհիկ կյանքից վերցված դրվագներ, թռչուններ, բուսական զարդանկարներ և այլն։ Սեղ հայտնի կնիր-մատանիները թվով յոթն են։ Վեցը պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում։ Մատանիներից հինգը բրոնզից են, առանց ակնարնի ու ակնաքարի, իսկ մեկը արծաթից է, ընդելուզված մուգ կարմիր քարով։ Բոլոր մատանիներն էլ կրում են արաբատառ գրություն։ Յոթերորդ մատանին պատկանել է հայոց արքա Աշոտ Երկաթ բագրատունուն և գտնվել է 1940 թ. Հյուսիսային Կովկասում՝ Զելենչուկի տաճարում։ Ունի ակնարուն, որին ագուցված է մուգ կարմիր գույնի ալմանդին, վրան արաբերեն երեք բառից արձանագրություն.

Աշոտ Բ Ամրատ (ընթերցվում է «Աշոտ որդի Ամրատի»)[9]։

Մատանին ոչ միայն բարձր իշխանության խորհրդանիշ էր, այլև ամուսնության նշանակ։ Հայկական սովորույթի համաձայն, աղջիկը համարվում էր նշանված, երբ փեսացուի մայրը, հայրը կամ ազգականներից մեկը նրան նվիրում էր մի մատանի, երբեմն էլ գինդ կամ ապարանջան։ Զարդն այս դեպքում ստանում էր նաև իրավական ֆունկցիա։ Վարանդում պահպանված սովորության համաձայն, տղայի մայրը կամ մերձավոր ազգականն աղջկա ծնողների համաձայնությունը նախօրոք ստանալուց հետո Ծաղկազարդի տոնին, եկեղեցում, ծաղկազարդի ծառի վրա վառվող մոմերից վառելով մի խաչաձև մոմ, որի վրա հագցրած էին լինում արծաթե մի մատանի, հանում և լռելյայն տալիս է մատանին իր ուզած աղջկա ձեռքը։ Այդ աղջիկը համարվում էր նշանված։ Հարսնացուն, ըստ ընդունված կարգի, մատանին կրում էր աջ ձեռքի մատնեմատին[10]։

Մատանիներն իրենց դասդ պատրաստվել են տարբեր մետաղներից, տարբեր ձևերի։ Վաղ միջնադարին հատուկ են եղել ակնարնով կամ ակնախորշով մատանիները։ Որպես ակ կարող էին ծառայել զանազան թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, ապակին, հախճապակին և մածուկը (պաստա)։ Արաբական շրջանից սկսած ակնարնով մատանիներն իրենց տեղն սկսեցին զիջել առանց ակնախորշի մատանիներին։ Վերջինս առավել ակնհայտ դարձավ ուշ միջնադարում, երբ մատանիները դարձան առանց ակնարնի և նրանցում ագուցված քարերի։ Ակնախորշին փոխարինեցին փորագիր զարդապատկերներով հարդարված մետաղե վահանակները։ Ակնարնով մատանիները դարձան սակավ գործածական։ Առանց ակնարնի մատանիներ. մետաղների պակասության և ընչազուրկ խավերի պահանջները բավարարելու նպատակով, սկսեցին պատրաստել ապակուց. դրանք էժան էին և դյուրամշակ։ Մատանիներն իրրև գարդ ավելի քան շեշտում էին այն կրող անձի սոցիալական պատկանելությունը։

Մատանիների գտածո նմուշները հարմար ենք գտել խմբավորել ոչ թե ըստ գործածության կերպի (արքայական, նախարարական, ամուսնական, օրիորդական և այլն), այլ ըստ ձևի և նյութի. 1. Ակով և բնով, այսինքն՝ ակնախորշով մատանիներ, 2. Վահանակով կամ առանց ակնարնի մատանիներ, 3. Օղակաձև մատանիներ։

Ակնարնով մատանիները թվով տասն են և ըստ նյութի բաժանվում են. ոսկի՝ երեք հատ (Դվին), արծաթե՝ հինգը (Դվին), բրոնզե՝ երկուսը (Դվին, Դառնի)։

Ոսկի մատանիներից առաջինը (1906/244*, քաշը՝ 2,8 գ) երբաճաշակ մի գարդ է, քիչ վեր բարձրացող օվալաձև ակնարնով, ուր տեղավորված է փիրուզե քար։ Փիրուզը Հայաստան էր ներմուծվում հարևան Իրանից և տեղում թանկ արժեր։ Փիրուզե քարով մատանիները Արևելքում և Հայաստանում շատ հարգի էին, կրում էին մեծահարուստ մարդիկ։ Քարն ամուր պահելու նպատակով ընի եզրերին տեղավորված են չորս կեռիկ-ճանկեր, որոնք ամուր գրկել են ընում ագուցված քարը։ Մատանու դեպի բուսեր եկող կողերի վրա նկատելի են թեփուկաձև զարդեր, արված նուրբ սեադով, տեխնիկական մի հնարանք, որը հազվադեպ է հանդիպում հայ միջնադարյան ոսկերչության մեջ (նկ. 1)։

Երկրորդ ոսկի մատանին (1794/410, քաշը՝ 0,65 գ) նույն տիպի է, միայն այն տարբերությամբ, որ կողերը մտնում են ուռուցիկ, դեպի վեր ձգվող օվալաձև ընի մեջ։ Քարն ընկած է։

---

8 Մ. Օ ր մ ա ն յ ա ն, Միթեթական բառարան, Անթիլիաս. 1956, էջ 158։ Նույնի՝ Հայոց եկեղեցիների պատմությունը, Կ. Պոլիս, 1911, էջ 200։

9 В. А. К р а ч к о в с к а я. Печать Багратида Ашота с арабской надписью, КСИИМК. 1946, № 12, էջ 115—116։

10 «Ազգագրական հանդես», հատ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 21։

* Այստեղ և հետագայում նշվում են Հայաստանի պատմության թանգարանի կոլեկցիոն համարները։

կողերի վրա նշմարվում են սևագով արված եռատերև զարդերը։ Մատանու չափերից և կշռից դատելով՝ կարող ենք պնդել, որ պատկանել է փոքր երեխայի։ Երկու մատանիներն էլ ըստ շերտի (միջնաբերդ, վերին շերտ, հոր), ուղեկցող նյութերի (հախճապակի ցանցկեն բասեր, հախճապակի բաս հուշկապարիկի պատկերով), զարդաձևի ոճի, վերաբերում են XI—XIII դդ.[11] (նկ. 2)։



Նկ. 1



Նկ. 2

Ոսկերչական արվեստի տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ՀՊՊ Բանգարանում պահվող 2043 թվահամարի ոսկե մատանին (քաշը՝ 4,7 գ)։ Այն բարակ թելերից հյուսած մի օղ է, որի վրա նստած է դեպի վեր բարձրացող ուղիղ պատերով, շրջանաձև բունը՝ հարդարված վերադիր հատիկաշարով։ Վերջինս թերի է։ Ակն ընկած է։ Հատիկաշարի տեխնիկան հայ ոսկերչությանը հայտնի է շատ վաղ ժամանակներից։ 1952 թ. Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի շրջակայքում, շինարարական աշխատանքների ժամանակ, բացվել է մի հարուստ դամբարան, որի նյութերի մեջ եղել են ոսկե մանյակի բեկորներ՝ պատրաստված ոսկեթելի ու հատիկաշարի ամենանուրբ արվեստով։ Նույն եղանակով պատրաստված ոսկե մի գույգ կիսալուսնաձև ականջօղեր գտնվել են և Կարմիր-բլուրի պեղումների ժամանակ[12]։ Հատիկաշարով են զարդարված Դվինից գտնված ոսկե ապարանջաններից մի քանիսը, ոսկե կողովաձև ականջօղը[13]։ Նկարագրվող մատանին ձևով, պատրաստման հնարներով ու արվեստով սերտորեն կապվում է վերը նշված ապարանջանների հետ և կարող է թվագրվել X—XI դդ.։

Արծաթե մատանիները թվով հինգն են։ Մատանիներից առաջինը (2158/194) պատկանում է կնիք մատանիների խմբին, մասամբ թերի է, պահպանված է օվալաձև բունը։ Վերջինիս գուցված է ուռուցիկ, դեպի դուրս ցցված մուգ կարմիր սարդիոնե քար, որի վրա փորագրված է արաբերեն երեք բառ. «Իսահակն իբն Ազդար»։ Համաձայն գրության ոճի (քուֆի, շեղատառ) և շերտագրական տվյալների (միջնաբերդ, վերին շերտ, հոր) մատանին վերաբերում է XII դարին[14] (աղ. I, 1)։

2325/54 թվահամարի մատանին արծաթե մի շատ գեղեցիկ զարդ է, դեպի վեր ձգվող բազմանիստ ակնաբնով։ Ակնաբնում տեղավորված է բաց երկնագույն փիրուզե քար։ Մատանին թերի է։ Ուղեկցող նյութերի օգնությամբ (քրեզանի նստուկ կանաչավուն ջնարակով՝ հատակին թռչունի գծագիր պատկեր, մեծ սկուտեղ՝ շողուն հախճապակուց, կենտրոնում մեդալիոն՝ զարդարված գազանավազք պատկերող զարդագոտիով) մատանին թվագրվում է XI—XII դդ. (աղ. I, 2)։

Նույն խմբի երրորդ մատանին (2046/128,

---

11 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքի պեղումները, I, Երևան, 1952, էջ 223։

12 Б. Б. Пиотровский, Искусство Урарту VIII—VI вв., Л., 1962, էջ 88, նկ. 53։

13 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 176։

14 Մատանու թվագրության և գրության ոճի որոշման հարցում մեզ օգնել է Լ. Տ. Գյուզալյանը։




1



2


3




4

5



6

Աղյուսակ I

օղի տրամագիծը՝ 25 մմ, բնի երկարությունը՝ 15 մմ, բնի պատերի բարձրությունը՝ 0,5 մմ) ունի օվալաձև բուն, որին ագուցված քարն այժմ ընկած է և տեղը լցված է ինչ-որ նյութով։ Մատանին ձևով կապվում է Դվինից գտնված ոսկե մատանիներին և պատկանում է X—XI դդ. (աղ. I, 3)։ Չորրորդ մատանին (2121/241, չափերը՝ 22×20 մմ) ինքնատիպ մի զարդ է կլորավուն, ներս ընկած բնով։ Բունը պատրաստվել է առանձին, ապա զոդվել կողերին։ Այն զարդարված է վերադիր արծաթե մանր ու խոշոր հատիկներով, բնում ագուցված է սարդիոնե կարմրավուն քար։ Զարդն իր ձևով, պատրաստման արվեստով ու հնարանքներով բաղդատվում է Դվինից գտնված ոսկե օձագլուխ ապարանջանների, զամբյուղաձև օղի, հյուսածո մատանու հետ և վերաբերում է նույն՝ X—XI դդ. (աղ. I, 4)։ Այս խմբի վերջին մատանին (գտնվել է Դվինի 1970 թ. պեղումների ժամանակ) ունի ուռուցիկ նիստավոր կողեր, որոնք ավարտվում են հատած կոնի ձև ունեցող բնով։ Բունն ունի քառակուսի կտրվածք, որին ագուցված է կարմիր գույնի սարդիոնե քար։ Բնի երկու կողմերում դրված են մեկական ճանկ-կեռիկներ, որոնք թեքված են դեպի քարը և ամուր պահում են այն։ Մատանու բունն ու կողերը սնամեջ են։ Կողերի վրա պահպանված են ժամանակի ընթացքում անհետացած բուսական զարդաձևերի հետքեր։ Մատանին իր ձևով կրկնում է վաղ միջնադարյան ակնախորշով մատանիներին։ Սակայն վաղ միջնադարում ճանկ-կեռիկները չեն հանդիպում, դրանք հանդես են գալիս հետագայում և բնորոշ են ուշ միջնադարին։ Նույն հնարներով են պատրաստված նաև վերոհիշյալ երկու ոսկե մատանիները, որոնց հետ և բաղդատվում է այս մատանին։ Վերջինս թվագրվում է XI—XII դդ.։

Ակնաբնով բրոնզե մատանիները երկուսն են։ Առաջինը գտնվել է Գառնիից (1965/48, օղի տրամագիծը՝ 16 մմ.), ունի քիչ երկարավուն օվալաձև բուն, կենտրոնում կլորավուն ակնափոսով, որի մեջ ագուցված է հասարակ կանաչավուն ապակե քար։ Երկրորդ մատանին Դվինից է (2046/128$_2$, օղի տրամագիծը՝ 17 մմ, ակնափոսի երկարությունը՝ 0,7 մմ)։ Մատանին թերի է, ունի կլորավուն բուն, ուր տեղադրված է եղել սրածայր փոքրիկ քար։ Կողերը սնամեջ են, բնի մոտ՝ մի փոքր ուռուցիկ և ունեն տերևի ձև։ Դրանք զարդարված են մանր գծազարդերով։ Երկու մատանիներն էլ թեև թանկարժեք չեն, բայց պատրաստված են ճաշակով (աղ. I, 5)։

Վահանակով կամ առանց ակնախորշի մատանիները թվով երեսունվեցն են, պատրաստված են արծաթից, բրոնզից, պղնձից և երկաթից։

Արծաթե մատանիները ներկայացված են միակ օրինակով (2121/196, օղի տրամագիծը՝ 20 մմ, կողերի լայնությունը՝ 0,5 մմ)։ Զարդն իր հարդարման ոճով ու ձևով եզակի է մեր հավաքածոյում։ Մատանին ունի լայն տափակ կողեր, որոնք պատրաստվել են առանձին։ Կողերին ամրացվել է գլխիկը շրջանաձև վահանակը։ Վահանակի վրա մեծ հմտությամբ ամրացվել են հատիկի և լարի տեխնիկայով արված գնդիկները, որոնք կենտրոնում միանում են յոթներորդ գնդիկին։ Մատանին իր ամբողջության մեջ թողնում է բացված ծաղկի տպավորություն։ Կողերը սնամեջ են, զարդարված հինգ բարակ ժապավեններով։ Ժապավեններից երրորդի դաշտը զարդարում է փորագիր և հյուսածո զարդը, իսկ երկուսը անզարդ են։ Մատանին մաշված է։ Նմանօրինակ մի մատանի, միայն չորս գնդիկներով հայտնի է Փայտակարանի (Օրան Կալա) պեղումներից (28/1964)[15] և վերաբերում է XI—XIII դդ. (աղ. I, 6)։

Վահանակով բրոնզե մատանիները 25-ն են և բաժանվում են մի քանի ենթախմբերի.

1. Օվալաձև վահանակով մատանիները 6-ն են։ Դրանցից 5-ը օգտագործվել են որպես կնքամատանիներ։ Առաջինը Ամբերդի ամրոցի պեղումներից հայտնաբերված մի շատ գողտրիկ զարդ է (2249/273, վահանակի չափերը՝ 10×0,5 մմ), մասամբ թերի։ Մատանին ունի նեղ, հարթ և ուռուցիկ կողեր, որոնք ավարտվում են օվալաձև վահանակով, որի վրա մեծ հմտությամբ ու վարպետությամբ պատկերված է մի սիրամարգ։ Թռչունը գլուխը նազանքով թեքել է դեպի ետ, մարմինը ձգել դեպի առաջ։ Պատկերը դիտելիս զգացվում է, որ վարպետը տիրապետել է գծանկարին կենդանություն, շարժում ու տրամադրություն հաղորդելու մեծ արվեստին։ Քանդակն իր ոճով կրկնում է Անիի բրոնզե սափորների, Խոտակերաց ս. Նշանի Մասանց պահարանի զարդաքանդակներին և թվագրվում է XII—XIII դդ.։ Հավանարար «սովորական» կնքամատանիներից է, որոնց մասին բազմիցս տեղեկացնում են մեր պատմիչները (աղ. II, 3)։

Երկրորդ կնքամատանին Անի քաղաքից է (123/1406, օղի տրամագիծը՝ 20 մմ), ունի լայն ուռուցիկ կողեր, որոնք ավարտվում են օվալաձև վահանակով։ Վահանակի վրա փորագրված է արաբերեն արձանագրություն։ Երրորդ մատանին Դվին քաղաքատեղիի պեղումներից է (1617/273), նույնպես օվալաձև վահանակով և արաբերեն արձանագրությամբ։ Մատանին թերի է։ Վերջին երկու մատանիները արձանագրու-

15 Գտնվում է Բաքվի պատմության պետական թանգարանում։















Աղյուսակ II

թյունների գրության ոճով նման են Դվինից գտնված վերոհիշյալ կարմիր սարգիոնե քարով կնիք-մատանու գրության ոճին և թվագրվում են XII դարով։ Նույնատիպ մատանիներից չորրորդը դարձյալ Անի քաղաքի պեղումներից է (123/1408, չափերը՝ 25×20 մմ) և իր վահանակի վրա փորագրված ունի մեկ բառից արաբերեն արձանագրություն։ Գրությունը պարզ է, որոշակի (աղ. II, 6)։ Այս վերջին երեք մատանիներն էլ «սովորական» անձնական կնքամատանիներ են և հավանորեն պատկանել են իրավական տեսակետից միևնույն վիճակում գտնվող անձանց։

Օվալաձև վահանակով մատանիներից երկուսը դարձյալ Անիից են։ Առաջինը (123/1410, չափերը՝ 23×0,2 մմ)։ լայն, ուռուցիկ կողերով կնիք-մատանի է, որի վահանակի վրա իրրև զարդ փորագրված են ոճավորված թռչուն, թփեր և այլն։ Մատանու ձևը և զարդը պարզունակ են։ Երկրորդ մատանին (123/1409, օղի տրամագիծը՝ 25 մմ) անզարդ է, գեղեցիկ իր պարզության մեջ։ Երկու մատանիներն էլ (աղ. II, 2, 5) իրենց ոճով և պատրաստման հնարանքներով պատկանում են XII—XIII դդ.։

2. Շրջանաձև դուրս ցցված վահանակով մատանիները երկուսն են։ Դվին քաղաքից գտնված մատանին (1905/45) կիսով չափ թերի է, ունի բարակ կողեր, որոնց վրա կենտրոնում նստած է շրջանաձև վահանակը՝ արաբերեն արձանագրությամբ։ Մատանին հավանորեն գործածվել է որպես կնիք։ Ըստ շերտի (միջնաբերդ, վերին շերտ, բարձրությունը 0,5 մ) և գրության ոճի (բուֆի, չոճավորված) պատկանում է XII դարին (աղ. II, 7)։

Երկրորդ նմուշը (Գառնի, 1967/70, օղի տրամագիծը՝ 25 մմ, վահանակի չափերը՝ 12×10 մմ) ամբողջական է և ունի ոչ լայն կողեր, որոնց վրա նստած է բրգաձև վահանակը։ Վերջինս զարդարում են յոթ շրջաններ (որոնցից վեցը՝ շուրջը, իսկ յոթերորդը՝ կենտրոնում), որոնք վահանակին տալիս են բացված ծաղկի տեսք։ Մատանին իր զարդանախշով հարազատ է հա։ կիրառական արվեստի ավանդույթներին։ Նույն շրջան-զարդանախշերն են զարդարում Դսեղի Բարձրաբաշ ս. Գրիգոր եկեղեցուց գտնված բրոնզե խաչերը, Անիի պեղումներից գտնված խաչերն ու աշտանակ-մոմակալները, որոնք որոշակիորեն պատկանում են XI—XIII դդ. (աղ. II, 8)։

3. Բազմանիստ կամ նիստավոր վահանակով մատանիները երկուսն են։ Դրանցից մեկը գտնվել է Անիի պեղումների ժամանակ (123/1410, օղի տրամագիծը՝ 25 մմ, վահանակի նիստերի չափերը՝ 20×18 մմ) և շատ մասսիվ մի զարդ է։ Ունի լայն կողեր, որոնք բնի մոտ կազմում են վեցանիստ վահանակ։ Վահանակը զարդարում են փորագիր շրջանները (վեցը նիստի վրա, յոթերորդը՝ կենտրոնում), զարդաձևեր, որոնք, ինչպես նշեցինք, բնորոշ են XI—XIII դդ. զարդարվեստին։ Մատանին իր ձևով ու զարդաոճով ունի բազմաթիվ զուգահեռներ Վրաստանում և Ադրբեջանում[16] (աղ. II, 1)։

Երկրորդ մատանին Դվինից է (2121/194, օղի տրամագիծը՝ 17 մմ, կողերի լայնքը բնի մոտ՝ 0,5 մմ), ունի նեղ կողեր, որոնք բնի մոտ մի փոքր լայնանում են և կազմում վեցանիստ վահանակ, զարդարված փորագիր կետազարդերով (աղ. III, 1)։

4. Քառակուսի վահանակով մատանիները երկուսն են։ Այս ենթախմբի մատանիները ձևով կրկնում են դեռևս անտիկ շրջանից հայտնի, դեպի բունը աղեղնաձև նեղացող ուսերով, բարձր բնով և ակնախորշով մատանիներին[17], միայն այն տարբերությամբ, որ վերջիններս ակնախորշի փոխարեն ունեն քառակուսի վահանակ, զարդարված փորագիր զարդերով։

Մատանիներից առաջինը (Դվին, 2047/81) ունի նեղ ուսեր, որոնք կենտրոնում դեպի ներս աղեղնաձև թեքվելով՝ կազմում են բարձր բունը, քառակուսի վահանակով։ Վահանակը զարդարում են փորագիր կետ, շրջան-կենտրոնում՝ կետ զարդանախշերը, որոնք բնորոշ են XI—XIII դդ. կիրառական ու դեկորատիվ արվեստների համար և ունեն լայն տարածում թե՛ Հայաստանում և թե՛ Վրաստանում[18] (աղ. III, 2)։

Այդ խմբի երկրորդ մատանին Անիի պեղումներից է (123/1411, օղի տրամագիծը՝ 25 մմ, բնի բարձրությունը՝ 0,7 մմ) և գրեթե կրկնում է նույն ձևը։ Մատանին վահանակի վրա ունի արաբերեն արձանագրություն (աղ. III, 3)։

5. Գմբեթաձև կամ կոնաձև բնով մատանիները երկուսն են։ Սրանք, ի տարբերություն մյուսների, վահանակ չունեն և կրկնում են բնով և ակնախորշով մատանիներին, միայն

---

[16] Р. М. Долаберидзе, Перстни XI—XIII вв., «Вестник Гос. музея Грузии», XXVII—B, Тбилиси, 1967, աղ. II, 2, 4։ Ф. А. Ибрагимов, Металлообрабатывающее ремесло в средневековых городах Азербайджана в IX—XIII вв. (автореферат), Баку, 1969, էջ 18։

[17] М. Н. Лордкипанидзе, Геммы Гос. музея Грузии, т. II, Тбилиси, 1958, էջ 70, նկ. 48, էջ 76, նկ. 57, էջ 77, նկ. 58։

[18] Р. М. Долаберидзе, Грузинские украшения XI—XIII вв. (автореферат), Тбилиси, 1972, էջ 12։













Աղյուսակ III

առանց ակնախորշի։ Բունը ակնախորշի տեղում ձգվելով՝ վերածվում է գմբեթի կամ կոնի։ Մատանիներից առաջինը (1543/777, օղի տրամագիծը՝ 17 մմ, բնի կամ կոնի բարձրությունը՝ 0,6 մմ) գմբեթաձև բնով, բնի մոտ բառակուսի, մի փոքր լայնացող կողերով գեղեցիկ զարդ է, հարդարված փորագիր ճառագայթաձև զարդանախշերով։ Մատանու կողերը զարդարում են երկու կողմից արված ելուստները։ Մատանին ամրողջական ձուլվածք է։ Նույնատիպ մատանիներ հանդիպում են և Վրաստանի միջնադարյան հնավայրերում[19], թվագրվում են XI—XIII դդ. (աղ. III, 4)։

Երկրորդ մատանին (1980/141) թերի է և ունի նույն ձևը, ինչ որ առաջինը, միայն այն տարբերությամբ, որ գմբեթը մի փոքր փոված է և զարդարված փորագիր գծազարդ վանդակներով։ Թվագրվում է նույն դարերով, ինչ որ առաջինը (աղ. III, 5)։

6. Խաչաձև վահանակով մատանիներից հայտնի է մի փոքրիկ մատանի Դվինի 1938 թ. պեղումներից (1617/239)։ Ունի նեղ կողեր, որոնք բնում կազմում են քառաթև երկարակող մի խաչ։ Վերջինիս թևերից մեկը կեսից կոտրված է։ Մատանին իր ձևով եզակի է։ Խաչն իր ձևով ուղղակի զուգահեռներ ունի XII—XIII դդ. թվագրվող խաչքարերի հետ (աղ. III, 7)։

Բրոնզե մատանիներից վերջինը, որն առանձնանում է բոլորից, մի փոքրիկ նուրբ զարդ է (1917/100, օղի տրամագիծը՝ 10 մմ), պատրաստված բրոնզե երկու բարակ լարերից։ Լարերին կենտրոնում միանում է դարձյալ բրոնզե լարից պարուրաձև հյուսած կլորավուն բունը՝ կենտրոնում փոքրիկ գնդիկով։ Կողերը, որպեսզի իրարից չանջատվեն, բնի մոտ 2 կողմից փաթաթված են բարակ լարերով, որոնք միաժամանակ ծառայում են իբրև զարդ։ Մատանին ինքնատիպ մի իր է և զուգահեռներ չունի (աղ. III, 6), կարելի է թվագրել IX—XI դդ. միայն հարակից նյութերի օգնությամբ (շողուն հախճապակե անոթի նստուկ, արաբատառ արձանագրությամբ, ապակե սրվակի բեկոր՝ ոսկեզօծ զարդանախշով)։

Երկաթե մատանիները ներկայացված են վատ պահպանված օրինակներով։ Երկաթե մատանիների գոյության փաստը մատնանշում է այն իրողությունը, որ մատանիները որպես զարդ լայն գործածություն ունեին։ Հասարակության ունեզուրկ խավը, միջոցներ չունենալով թանկարժեք զարդերի համար, բավարարվում էր երկաթե մատանիներով։ Խմբում առավել հետաքրքիրը Անիից գտնված (123/1407) մատանին է, որը կազմված է օղից և նրան առանձին ամրացված վահանակից։ Ունի լայն կողեր, որոնք միանալով կազմում են քառակուսի բունը, որում տեղադրված է բրոնզե քառակուսի վահանակը, զարդարված դրվագած առյուծապատկերով։ Հագանը պատկերված է կանգնած վիճակում, խրոխտ դիրքով, պոչը թեքած դեպի մեջքը, աչքերը սևեռած ինչ-որ տեղ։ Մարմինը ձգված է, պատրաստ թռիչքի։ Զարդապատկերն իր ոճով և դինամիզմով մարմնավորում է Անիի ոսկերչական դպրոցի ավանդույթները։ Մատանին կարող էր գործածվել և՛ որպես կնիք, և՛ որպես զարդ, քանի որ առյուծը հայ միջնադարյան զարդարվեստում սիրված մոտիվներից էր որպես ուժի ու գեղեցկության խորհրդանիշ (աղ. II, 4)։

Օղակաձև մատանիները 10 հատ են։ Հայտնի են Դվինի, Անիի, Գառնիի, Ամբերդի պեղումներից։ Դրանք բրոնզից են, պղնձից և երկաթից։ Ունեն ուռուցիկ, տափակ, ուռուցիկ շերտավոր կողեր, որոնք կարող են լինել իրար հագած, լրիվ կլոր, երբեմն էլ իրար չկպած, բաց ծայրերով։ Այս մատանիները լայն տարածում ունեին Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և կոչված էին բավարարելու չքավոր խավի պահանջները։ Նշված խմբից քիչ թե շատ ուշադրության արժանի է Անիի քաղաքատեղիից գտնված բրոնզե մատանին։ Զարդն առանձնանում է իր պարզությամբ ու համեստ ճաշակով։ Մատանին (123/1419) ունի ուռուցիկ լայն կողեր, որոնց վրայով երեք տեղով անցնում են բարակ գծեր, կազմելով երեք առանձին ժապավեններ։ Վերջիններս այն տպավորությունն են թողնում, թե մատանին բաղկացած է երեք առանձին օղերից։ Մնացած մյուս մատանիներն անզարդ են, խիստ մաշված և նրանց գեղարվեստական արժեքի մասին ոչինչ ասել հնարավոր չէ։

Մատանիների ձևերի ու զարդապատկերների քննությունը բերում է այն հետևության, որ միջին դարերում, տակավին վաղ միջնադարից սկսած, ավանդույթի ուժով շարունակում էին գոյատևել նախորդ դարերում մշակված զարդաձևերն ու ոճական առանձնահատկությունները։ Սակայն դա բոլորովին էլ չի խոսում այն մասին, թե միջին դարերում չեն ստեղծվել ոճական նոր հնարքներ ու նոր զարդաձևեր, որոնցով գեղազարդվում էին մատանիները։ Ընդ որում հետաքրքրական է այն, որ այդ զարդաձևերին հաճախ փոխարինում էին արաբական գրերը։ Շատ հնարավոր է, որ վարպետն այդ նշանները օգտագործել է ոչ թե որպես գրության կամ պատկանելության նշանակ, այլ իբրև զարդաձև, ինչպես հանդիպում է խեցե-

---

19 Р. М. Долаберидзе, Перстни XI—XIII вв., աղ. II, 10։

ղեն նմուշների վրա, երբ գրությունը վերածվել է լոկ զարդաձևի։

Ինչպես տեսանք, մեծ թիվ են կազմում ոչ թանկարժեք մետաղներից պատրաստած մատանիները։ Կարծում ենք, որ այս իրողությունը առնչվում է թանկարժեք մետաղների ձեռքից-ձեռք անցնելու, ձուլվելու-վերաձուլվելու և հիշյալ դարերում նկատվող թանկարժեք մետաղների պակասի հետ, որը նկատելի էր թե՛ տնտեսության մեջ, և թե՛ դրամական շրջանառության ոլորտում[20]։ Մինչդեռ հայ և օտար վկայությունների համաձայն Հայաստանը IX—XIII դդ. եղել է ոսկերչության և արծաթագործության զարգացած երկիր։ Առևտրական ուղիները ոչ միայն Հայաստան էին բերում, այլև Հայաստանից Մերձավոր Արևելքի երկրներ, Բյուզանդիա, Սև ծովի շրջանը, Կիևյան Ռուսիա էին տանում հայ ոսկերիչների կերտած գարդերը։

Մատանու, իբրև նյութական մշակույթի հուշարձանի ուսումնասիրությունը կարող է լրացնել մեր գիտելիքները միջնադարյան Հայաստանի սոցիալական կարգի և գեղագիտական ըմբռնումների վերաբերյալ։

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ XIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ XIV ԴԱՐԻ ՀԱԽՃԱՊԱԿԻՆ

Հայաստանի՝ մոնղոլական տիրապետության շրջանի նյութական մշակույթը մինչև օրս հատուկ քննության նյութ չի հանդիսացել[1]։ Պատճառը հիմնականում այդ շրջանի հնագիտական հուշարձանների պեղումների սակավությունն է։ Այնուհանդերձ, Անիից, Գառնիից, Ամբերդ ամրոցից, մասամբ Տիկնունիից (ամրոց Դվինի մոտ) հայտնաբերված նյութերի մեջ առկա են XIII—XIV դդ. նյութական մշակույթի մնացորդներ, հիմնականում ջնարակած խեցեղեն և հախճապակի, որոնց ուսումնասիրությունը տալիս է Հայաստանի հիշյալ ժամանակաշրջանի արհեստագործական արտադրանքի առանձին ճյուղերի հետաքրքիր պատկերը։

Ներկա աշխատանքում փորձ է արվում տալ վերոհիշյալ հնավայրերի գոյության վերջին շրջանի ջնարակած խեցեղենի ընդհանուր մակարդակը, դասակարգել, առանձնացնելով ներմուծած նյութերը։

Ուսումնասիրվող խեցեղենն ըստ պատրաստման եղանակների, զարդերի բազմազանության ու կիրառական հնարավորությունների կարելի է բաժանել չորս մեծ խմբերի՝ կորալտով նկարազարդված անոթներ, բազմերանգ գունաշրով առարկաներ, շողուն ջնարակով զարդարուն խեցանոթներ և շքաղյուսներ։

ա) **Մուգ կորալտով նկարազարդված և բափանցիկ ջնարակով պատած անոթներ.**— Այս խմբի առարկաներն զգալի քանակ են կազմում և, ըստ երևույթին, ամենից շատ էին տարածված ուսումնասիրվող ժամանակաշրջանում։ Անոթների վրա հանդիպող զարդերը գերազանցապես բուսական և երկրաչափական են, արված հարթ մակերեսի վրա[2]։

Սովորաբար երկնագույն կամ փիրուզագույն ջնարակի տակ կորալտով արված զարդերը հանդես են գալիս ցայտուն սև երանգով։ Բուսական մոտիվներով զարդարուն նմուշներից ուշագրավ են Գառնիի ամրոցի պեղումներից հայտնաբերված մի շարք բեկորներ, որոնց զարդերն ու ֆոնն արված են սև և կապույտ երանգների համադրությամբ[3]։ Խիստ ուշագրավ է

---

20 Ս. Մուշեղյան, Դրամային շրջանառությունը Հայաստանում IX—XIV դդ., «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 48։

1 Տե՛ս Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի II, 1949—1956 թթ. պեղումների արդյունքները (միջին դարեր), Երևան, 1962։ Н. М. Токарский, О местонахождении Даран-Дашта, ДОДА «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1941, № 9, էջ 56. այս ուսումնասիրություններում տվյալ ժամանակների նյութական մշակույթը՝ մասնավորապես խեցեղենը տրված է ընդհանուր գծերով։

2 Ենթաջնարակային նկարազարդումով նման տիպի խեցեղեն արտադրվել է տակավին XII դարում և լայն գործածություն է ունեցել Մերձվոլգայում (Սարայ Բերքե), Միջին Ասիայում, Իրանում և այլուր. տե՛ս Н. Булатов, Классификация кашинной поливной керамики золотоордынских городов, СА, 1968, № 4, էջ 102։ Այս տեսակի խեցեղենի երևան գալն ու լայն գործածությունը բացատրվում է արտադրական պրոցեսների համեմատական պարզությամբ, էժանությամբ և տվյալ պայմաններում դեղարվեստական բարձր ճաշակով նվաճված առարկաների ստացումով. այդ իսկ պատճառով հիշյալ տեխնիկան խեցեղեն առարկաների արտադրության մեջ առանց ընդհատումների պահպանվեց մինչև XIV դարը։

3 Առիթից օգտվում ենք մեր շնորհակալությունը հայտնելու պրոֆ. Բ. Առաքելյանին Գառնիի նյութերը սիրով տրամադրելու համար։